Հավելված 3
Արդարադատության ակադեմիայի
կառավարման խորհրդի 2021 թվականի
դեկտեմբերի 22-ի ԿԽ-010/21/1 որոշման

ՈՒՍՈՒՑՄԱՆ Ծ Ր Ա Գ Ի Ր

ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՈՒՍՈՒՑՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ուսուցման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) ներառում է դատական կարգադրիչների 2022 թ. վերապատրաստման և հատուկ ուսուցման կրթական չափորոշիչները, ուսուցման ձևը, ուսումնառության ժամաքանակը և ժամկետները, ինչպես նաև դասավանդվող առարկայական կուրսերի համառոտ նկարագիրը:
2. Ծրագիրը մշակվել է «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի, Բարձրագույն դատական խորհրդի 08.07.2021թ. ԲԴԽ-47-Ո-99 որոշման պահանջներին համապատասխան:
3. Ծրագիրը նպատակաուղղված է վարքաբանության, առաջին բուժական և հոգեբանական օգնության, ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և հրազենի գործադրման հմտությունների, կառավարման հմտությունների վերաբերյալ դատական կարգադրիչների գիտելիքների և հմտությունների կատարելագործմանը:
4. Յուրաքանչյուր խմբի վերապատրաստումն ու հատուկ ուսուցումն ավարտվում է վերապատրաստման արդյունքների գնահատմամբ: Գնահատումն իրականացվում է տվյալ խմբի դասընթացներին հաջորդող առաջին օրը:
5. Վերապատրաստման և հատուկ ուսուցման ժամանակացույց է սահմանվում 2022 թվականի մայիս-օգոստոս ամիսները:

II. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՑԱՆԿ

N	Դասիչը	Անվանումը	Ժ/ք
1.	B-G-015-22	Դատական կարգադրիչների վարքաբանություն	12
2.	B-G-016-22	Առաջին բուժական և հոգեբանական օգնություն	10
3.	B-S-001-22	Ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և հրազենի գործադրման հմտություններ	6
4.	B-S-0014-22	Կառավարման հմտություններ	2

III. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. B-G-015-22. Դատական կարգադրիչների վարքաբանություն

Դասընթացն անհրաժեշտ է դատական կարգադրիչների կողմից պատշաճ վարքագծի դրսևորումն ապահովելու համար:

Դասընթացը ներառում է դատական կարգադրիչների ծառայողական վարքագծի կանոնները, էթիկայի ծագման և սահմանման հիմնահարցերը, քաղաքացիների հետ նրանց շփումների վարքաբանության հիմունքները, և այլ հարցեր:

Գնահատումն իրականացվում է բանավոր եղանակով՝ B-G-016-22 դասընթացի հետ միասնական քննությամբ:

2. B-G-016-22. Առաջին բուժական և հոգեբանական օգնություն

Դասընթացն անհրաժեշտ է դատական մարմինների հետ շփվող քաղաքացիների հոգեբանական և առողջական ռիսկերը նվազեցնելու համար՝ դատական կարգադրիչներին օգնելով առավել արդյունավետ իրականացնել պաշտոնական գործառույթները: Դասընթացը պայմանավորված է նաև դատական կարգադրիչների՝ դատարաններում արտակարգ կամ ճգնաժամային իրավիճակ առաջանալու դեպքում ձեռնարկվող անհրաժեշտ միջոցառումների վերաբերյալ գործնական հմտությունների ձևավորման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է անհատական և խմբային գործընթացների հոգեբանական բնութագրությունը, սթրեսի հիմքերը և տեսակները, դրա կառավարման մեթոդները, առաջին բուժօգնության հիմունքները, միջոցների և մեթոդների բնութագիրը:

Դասընթացը ներառում է նաև միջանձնային հարաբերությունների հոգեբանական ասպեկտները, ինքնակառավարման վերահսկողության առանձնահատկությունները և ներազդման հոգեբանությունը:

Գնահատումն իրականացվում է բանավոր եղանակով՝ B-G-015-22 դասընթացի հետ միասնական քննությամբ:

3. B-S-001-22. Ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և հրազենի գործադրման հմտություններ

Դասընթացն անհրաժեշտ է դատական կարգադրիչների մոտ հատուկ միջոցների գործադրման հմտությունների, ֆիզիկական ուժի և հրազենի կիրառման անհրաժեշտության, կիրառման պայմանների վերաբերյալ գիտելիքների ձեռքբերման համար:

Գնահատումն իրականացվում է հմտությունների գործնական ստուգման եղանակով:

4. B-S-0014-22. Կառավարման հմտություններ

Դասընթացն անհրաժեշտ է դատական կարգադրիչների մոտ կառավարման հմտություններ, այդ թվում՝ դատարաններում արտակարգ իրավիճակներ առաջանալու դեպքում դատական կարգադրիչների գործողությունների հմտություններ ձեռք բերելու համար:

Գնահատումն իրականացվում է բանավոր եղանակով՝ B-G-015-22 և B-G-016-22 դասընթացների հետ միասնական քննությամբ: